ՊԱՇՏՈՆ	Ընդհանուր իրավախորհրդատվության բաժնի մասնագետ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	ք. Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ	09/06/2025թ.
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	27/06/2025թ.

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է մոտիվացված և խելացի թիմի անդամի, ով պատասխանատու է լինելու ստորև նշված աշխատանքային պարտականությունները կատարելու համար.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մասնակցում է պայմանագրերի օրինակելի ձևերի կազմման և մշակման աշխատանքներին,
- Մասնակցում է Բանկի հետ համագործակցող կազմակերպությունների կողմից ներկայացվելիք փաստաթղթերի իրավական փորձաքննությանը,
- Կազմում է իրավական եզրակացությունների նախագծեր,
- Տրամադրում է իրավաբանական խորհրդատվություն Բանկի բոլոր ստորաբաժանումներին,
- Ուսումնասիրում է վարկային փաթեթները,
- Փոխանցում է սեմինարների և վերապատրաստումների արդյունքում ստացված գիտելիքը և հմտությունը մյուս աշխատակիցներին,
- Իր կողմից տրամադրվող տեղեկատվության և հաշվետվությունների արժանահավատության ապահովում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն իրավաբանական կրթություն
- Մասնագիտական աշխատանքային փորձը կդիտարկվի որպես առավելություն
- ՀՀ օրենսդրության՝ ներառյալ Բանկային օրենսդրության, իմացություն
- Համակարգչային գիտելիքներ
- Անգլերեն և ռուսերեն լեզուների իմացություն
- Հաղորդակցման հմտություններ
- Ժամանակի արդյունավետ կառավարում
- Առաքելության և տեսլականի իրականացում
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ
- Մանրուքների նկատմամբ ուշադրություն / լարված գրաֆիկով աշխատելու կարողություն
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացողություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝ անցեք հետևյալ https://idbank.bamboohr.com/careers/154 : Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» անվանումով:
ԱյԴի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը https://idbank.am/